ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«15» հունվարի 2019թ.**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ Ա. Մեսրոպյան:

Հանձնաժողովի անդամներ՝
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Ծատուրյան,
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ՝ Վ. Դադոյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Սմարթլայն», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ», «Բեսթ Ֆրենդս», «Շուշան Տեխնիկս» «ՏԻԳՎԱԿՈ» ՍՊԸ-ների և ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի, հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել

- 11-8,11-14,16,18,24,25 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին,
- 19,21,23,28,30,32,35,41,42,43 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին,
- 10,34,44 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բեսթ Ֆրենդս» ՍՊԸ-ին,

- 9,17,20,27,28,38,40 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԻԳՎԱԿՈ» ՍՊԸ-ին,
- 15,26,37 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին,
- 31 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3) Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/13 էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Սմարթլայն», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ», «Բեսթ Ֆրենդս», «Շուշան Տեխնիկս» «ՏԻԳՎԱԿՈ» ՍՊԸ-ներին և ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Ծատուրյան**

_____ **Վ. Դադոյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Ա. Եղիազարյան**